ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒՁՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2026

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՈՒՂԵՐՁ

Հարգելի ընթերցող,

Այս տարի Հայաստանի Հանրապետության արտաքին հետախուզության ծառայությունը թևակոխում է իր գործունեության 3-րդ տարին: Ըստ էության, 2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվել է մեր ծառայության ինստիտուցիոնալ ձևավորման շրջափուլը, որի ժամկետը սահմանվել էր մեր երկրի օրենսդիր մարմնի կողմից «Արտաքին հետախուզական գործունեության և արտաքին հետախուզության ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Կարծում եմ՝ ավելորդ է հիմնավորել, որ արագ փոփոխվող աշխարհակարգի, անկայուն և հակամարտություններով լեցուն միջազգային իրադրության, տնտեսական, լոգիստիկ ու տեխնոլոգիական խելահեղ մրցավազքի, արհեստական բանականության ու տեխնոլոգիական նորամուծությունների բերած մարտահրավերների պայմաններում կենսական է կանխատեսել, կանխարգելել, հակազդել ու խափանել մեր պետությանը սպառնացող վտանգները, պաշտպանել ու ամրապնդել Հայաստանի Հանրապետության պետականությունը, անկախությունը և ինքնիշխանությունը, բայց նաև տեսնել այն մարտավարական ու ռազմավարական հնարավորությունները, որոնց օտագործումը վճռական կլինի մեր պետության զարգացման ու հարատևության համար:

Մեր կողմից դիտարկվող աշխարհն ավելի ու ավելի փոխկապակցված է. միաժամանակ և՛ հսկայական, և՛ փոքր: Որպես Ծառայություն՝ մեզ հետաքրքրող գործընթացները պահանջում են մեր բոլոր զգայարանների անընդհատ աշխատանքը տարածության մեջ՝ 360 աստիճան, ժամային բոլոր գոտիներում:

Մեզնից պահանջվում է կարևոր փաստերի ու երևույթների խորքը ներթափանցող, դրանք անկողմնակալ վերլուծող, սուր ու պրագմատիկ միտք և մասնագիտական բարեվարքություն՝ ասելու համար մեր հետևություններն այնպես, ինչպես դրանք կան, որքան էլ, որ դժվար կամ անցանկալի լինեն դրանք: Մեր աշխատանքի թիրախը պետությունների, խմբերի, անհատների վատ կամ վնասակար մտադրություններն ու գործողություններն են, վտանգավոր երևույթները, իսկ մեր կենտրոնացումը մեր պետությանը, մեր ժողովրդավարությանը սպառնացող վնասակար դերակատարներն են ու մեր զարգացման խոչընդոտները:

Ընդհանրապես, հետախուզական ծառայությունները «լավ լուրեր» քիչ են հաղորդում, իսկ ավելի ճիշտ, հետախուզության «լավ լուրերին» հանրությունը, այդ թվում՝ մեր ընտանիքներն ու ընկերները, գլխավորապես անհիրազեկ են, և այս առումով, մեր ծառայությունն էլ բացառություն չէ: Մենք բացառություն չենք նաև մեր «վատ լուրերի» իմաստով:

Եվ ուրեմն, հարց կարող է առաջանալ. ինչո՞վ ենք մենք տարբերվում այլ երկրների ծառայություններից կամ ինչո՞վ ենք մենք բացառիկ: Ծառայությունում մենք կարծում ենք, որ այդ հարցի պատասխանը հնչում է մեր ամենասիրելի երկու բառով՝ Հայաստանի Հանրապետություն: Ահա մեր բացառիկության էությունն ու անփոփոխ նպատակակետը: Ահա մեր «լավ լուրերի» իրազեկ հասցեատերը – Հայաստանի Հանրապետություն: Մենք բոլորս Ծառայությանը միացել ենք հենց այս նպատակը սպասարկելու համար: Իսկ այս նպատակը լավագույնս սպասարկելու համար մեզ անհրաժեշտ է անհոգնել կրթվել ու զարգացնել մեր հմտությունները, մարզել մեր միտքն ու բաց պահել այն անծանոթ և փոփոխվող աշխարհի հանդեպ, ինքնաքննադատորեն վերաբերվել մեր իսկ ստեղծած բոլոր արդյունքներին, զարգացնել խնդիրները ստեղծագործական ու նորարարական ձևով լուծելու մեր ջիղը, զարգանալ ամեն օր, ամեն ժամ:

Քրիստինե Գրիգորյան, հունվար 2026

ՄԱՍ 1

ԶԵԿՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ

ՄԱՍ 1. ԶԵԿՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ

Մինչև այս տարվա զեկույցին անցնելը, օգտակար ենք համարում անդրադառնալ 2025 թվականի հունվարին հրապարակված մեր առաջին զեկույցում տեղ գտած գնահատականներին: 2025 թվականին փաստացի տեղի ունեցած իրադարձություններն ի ցույց են դնում Ծառայության բոլոր գնահատականների թե՛ վերաբերելիությունը, թե՛ ճշգրտությունը: Այլ կերպ ասած՝ Ծառայության աշխատանքի առաջնահերթ ուղղությունների և խնդիրների շրջանակում 2025 թվականին տեղի չեն ունեցել նշանակալից զարգացումներ, որոնք չեն կանխատեսվել զեկույցում, իսկ տեղի ունեցած զարգացումների հավանականություններն էլ ճիշտ են գնահատվել: Յուրաքանչյուր տարվա զեկույցում նախորդ տարվա գնահատականներին անդրադառնալու մոտեցումը որդեգրվել է որպես Ծառայության պատասխանատու ինստիտուցիոնալ մշակույթը ձևավորող կանոն:

Զեկույցը կարդալուց առաջ անհրաժեշտ է հիշել, որ Ծառայությունն իր ամենամյա զեկույցում գնահատում է այն հիմնական ռիսկերը, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով պայմանավորում են Հայաստանի Հանրապետության անվտանգային միջավայրը: Մյուս կողմից, ելնելով պետական գաղտնիքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրական սահմանափակումներից, ինչպես նաև զգայուն այլ տվյալների պաշտպանության օբյեկտիվ անհրաժեշտությունից՝ զեկույցում չենք արտացոլել փակ տեղեկությունները և տվյալները: Միևնույն ժամանակ զեկույցում տեղ գտած գնահատականները բաց և փակ աղբյուրներից ստացված հետախուզական տեղեկությունների համալիր վերլուծության արդյունք են: Զեկույցում Ծառայության գնահատականները ներկայացվում են ըստ իրադարձության զարգացման՝ Ծառայության կողմից գնահատված հավանականության: Հավանականության դասակարգումը բացատրվում է Աղյուսակ 1-ում:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Գնահատականի ձևակերպում	Հավանականության տոկոսը
Ամենայն հավանականությամբ	>90%
Մեծ հավանականությամբ կամ հավանականությունը բարձր է	>75-90%
Հավանական է կամ հավանաբար	>50-75%
Հնարավոր է կամ որոշ չափով հավանական է	>35-50%
Քիչ հավանական է կամ հավանականությունը ցածր է	>20-35%
Գրեթե անհավանական է	>10-20%
Խիստ անհավանական է	<10%

ՄԱՍ 2

ԶԵԿՈՒՅՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռազմաքաղաքական ռիսկեր

Ադրբեջան-Հայաստան

- Վաշինգտոնում 2025 թվականի օգոստոսի 8-ին ձեռք բերված համաձայնության արդյունքներով 2026 թվականին ռազմական էսկալացիան դարձել է գրեթե անհավանական, և բարձրացել է խաղաղության ինստիտուցիոնալացման հավանականությունը:
- Ադրբեջանի կողմից առաջ մղվող այսպես կոչված «արևմտյան Ադրբեջանի» և «արևմտյան ադրբեջանցիների վերադարձի» խոսույթն ու գործողություններն առաջացնում են ռիսկեր:

Ռուսաստան-Ուկրաինա

- 2026 թվականին Ռուսաստանի և Ուկրաինայի միջև ընթացող հակամարտության կայուն և երկարաժամկետ հանգուցալուծումը քիչ հավանական է:

Իսրայել-Իրան

- 2026 թվականին Իսրայել-Իրան փոխադարձ հարվածների կրկնվելու ռիսկը կպահպանվի՝ ընդլայնելով Հայաստանի անվտանգության խնդիրների շրջանակը:

Մերձավոր Արևելք

- 2026 թվականին Մերձավոր Արևելքում, հավանաբար, կպահպանվի զինված բախումների շարունակման ռիսկը:

Տնտեսական և ենթակառուցվածքային ռիսկեր ու հնարավորություններ

- Մեծ հավանականությամբ, որ մեր տարածաշրջանում թե՛ տնտեսական, թե՛ ենթակառուցվածքային ծրագրերի դրական դինամիկան կպահպանվի 2026 թվականին:
- Մեր տարածաշրջանի տնտեսական, ենթակառուցվածքային, առևտրային նոր նախաձեռնությունները 2026 թվականին շարունակաբար լինելու են տարածաշրջանում այլ շահեր հետապնդող տարբեր դերակատարների թիրախում, որը կարող է դրսևորվել թե՛ ֆիզիկական սահմանափակումներով, թե՛ տեղեկատվական ազդեցության օպերացիաներով, և թե վնասարար այլ գործողությունների դրսևորումներով:

Հայաստանի հիբրիդային սպառնալիքները 2026 թվականին

- 2026 թվականի ընտրություններով պայմանավորված՝ Հայաստանի դեմ արտաքին տարբեր դերակատարների կողմից իրականացվող ազդեցության գործողությունները, մեծ հավանականությամբ, կդառնան ավելի ընդգրկուն, բարդ և մասշտաբային:
- Հավանական է կեղծ, խեղաթյուրված կամ համատեքստից կտրված տեղեկատվության օգտագործմամբ տեղեկատվական վնասարար գործողությունների, վնասակար կիբեռ գործողությունների իրականացումը, ինչպես նաև «գետնի վրա» գործակալական ցանցի ակտիվացումը, իբրև թե «տեղական» քաղաքական ակտիվության գեներացումը, երիտասարդության և ակտիվիստական խմբերին թիրախավորող, վերջիններիս քաղաքական հայացքներն ու հայրենասիրական զգացմունքները շահագործող և մանիպուլացնող ծրագրերի կազմակերպումը:

Միջազգային ահաբեկչություն

- 2026 թվականին միջազգային ահաբեկչությունը կշարունակի մնալ անընդհատ զարգացող և վերափոխվող համաշխարհային սպառնալիք՝ ներառելով ավելի լայն աշխարհագրություն:

Տեխնոլոգիական

- Ռազմադաշտում նոր զինատեսակները փորձարկելու լայն հնարավորությունները կարագացնեն «արտադրանք-փորձարկում-կիրառում» շղթան:

Ռազմական

- Մեծ հավանականությամբ կընդլայնվի դրոնների դեմ պայքարում դրոնների դերը, նոր հեռանկարներ կստեղծվեն անօդաչու-օդաչու ավիացիայի ինտեգրման համար:
- Արհեստական բանականությունը, մեծ հավանականությամբ կշարունակի սահմանափակել մարդու դերը ռազմադաշտում՝ չփոխարինելով, սակայն վերափոխելով հրամանատարի գործառույթները որոշումների կայացման գործընթացում:

ՄԱՍ 3

ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

Հայաստան - Ադրբեջան սահման, Կիրանց ©primeminister.am

Վաշինգտոնի հռչակագրի ստորագրման արարողություն, 2025թ. օգոստոսի 8 ©primeminister.am

Ադրբեջան-Հայաստան. 2025 թվականին ինտենսիվորեն շարունակված երկկողմ բարձրաստիճան բանակցությունների, ինչպես նաև օգոստոսի 8-ին ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի ակտիվ ներգրավմամբ ձեռք բերված Վաշինգտոնյան հռչակագրի և «Խաղաղության և միջպետական հարաբերությունների հաստատման մասին» համաձայնագրի նախաստորագրման արդյունքում զգալիորեն նվազել է ռազմական էսկալացիայի և բարձրացել խաղաղ կարգավորման հավանականությունը:

Նշված և ուղեկցող գործընթացների ու տվյալների համապարփակ վերլուծության արդյունքում գրեթե անհավանական ենք համարում 2026 թվականին Հայաստանի և Ադրբեջանի միջև ռազմաքաղաքական մտադրությամբ պայմանավորված տարբեր մասշտաբների ռազմական էսկալացիան: Քիչ հավանական ենք համարում նաև այնպիսի տեղային գործողությունները կամ միջադեպերը, որոնք ռազմաքաղաքական մտադրությամբ չեն պայմանավորված:

2026 թվականին, մեծ հավանականությամբ, նոր առաջընթաց կգրանցվի սահմանագծման և սահմանազատման գործընթացում, երկկողմ առևտրատնտեսական նախաձեռնությունների, հասարակությունների երկխոսության, հումանիտար և այլ հարցերում: Տարածաշրջանային ենթակառուցվածքների ապաշրջափակման դեպքում ևս, մեծ հավանականությամբ, առաջընթաց կգրանցվի արդեն իսկ սկսված գործընթացներում, իսկ հարևանների հետ Հայաստանի երկկողմ կապակցվածության նախաձեռնությունները կխթանեն տարածաշրջանային առավել ընդգրկուն տնտեսական նախագծերի ընթացքը: Միևնույն ժամանակ սակայն, 2026 թվականին կընդլայնվեն կապակցվածության ապահովման այս գործընթացների դեմ մեր տարածաշրջանում սեփական ազդեցությունը պահպանելու և ավելացնելու շահեր հետապնդող պետությունների կողմից վնասակար գործողությունների ռիսկերը: Իսկ Ադրբեջանի և այլ դերակատարների կողմից Հայաստանի ինքնիշխանությունը հարցականի տակ դնող, կապակցվածության ծրագրերի իրականացմանը խոչընդոտող վնասարար խոսույթների ու հասկացությունների հետևողական կիրառությունը միայն կնպաստի այդ ռիսկերի նյութականացմանը:

Ծառայության համապարփակ վերլուծությունը ցույց է տալիս, որ երկարաժամկետ հեռանկարում խաղաղության կառուցման վրա էականորեն բացասաբար ազդող և ռիսկային գործոն են Ադրբեջանի կողմից պետական մակարդակով առաջ տարվող, այսպես կոչված «արևմտյան Ադրբեջանի» և «արևմտյան ադրբեջանցիների վերադարձի» խոսույթներն ու դրանց ուղեկցող գործողությունները: Ծառայության ունեցած տվյալները ցույց են տալիս, որ Ադրբեջանը Վաշինգտոնյան հռչակագրից հետո ոչ միայն չի նվազեցրել, այլև էականորեն ակտիվացրել է սույն քարոզչությունը, ինչը զգալի ռիսկեր է ստեղծում տարածաշրջանային կայունության, անվտանգության և երկարաժամկետ խաղաղության համար:

2026 թվականին Ծառայության առաջնահերթ խնդիրներից է լինելու շարունակաբար գնահատելը, թե որն է Ադրբեջանի կողմից «արևմտյան ադրբեջանցիների վերադարձի» առաջ մղման պետական քաղաքականության իրական նպատակը: Գնահատման է ենթակա մասնավորապես այն, թե արդյո՞ք Ադրբեջանը, այդ թեմաները, նոր ազգային գաղափարախոսություն դարձնելով, մտադիր է որևէ նոր ձևաչափով հակամարտությունը տեղափոխել Հայաստանի տարածք, թե՞ այսպես կոչված «արևմտյան ադրբեջանցիների վերադարձի» այս խոսույթն Ադրբեջանի արտաքին քաղաքական սակարկման և մասնավորապես՝ Ղարաբաղի հայերի վերադարձի թեմային հակազդելու գործիքակազմի մաս է:

Գրաֆիկ 1. Համեմատություն. «արևմտյան Ադրբեջանի» թեման ադրբեջանական 5 ԶԼՄ-ում



Ներառված են 1 պետական պաշտոնաթերթ և 4 իշխանամետ կայք: Իրականացվել է նշված ռեսուրսներում 2025թ. օգոստոսի 8-ին նախորդած և հաջորդած 138-ական օրերի ընթացքում այսպես կոչված «արևմտյան Ադրբեջանի» թեմայով բոլոր հրապարակումների քանակական համեմատություն, ինչը ցույց է տալիս, որ օգոստոսի 8-ից հետո **~36% ավելի շատ** նյութ է եղել:

Aygun Aliyeva: Record number of projects on Western Azerbaijan funded in 2025

DOMESTIC POLICY

06 November, 2025 • 11:29

The State Agency for Support to Non-Governmental Organizations (NGOs) of Azerbaijan funded a record number of projects related to Return to Western Azerbaijan in 2025, **Aygun Aliyeva,** Executive Director of the agency, said during a public discussion, Report informs.

Aliyeva noted that both the quality and quantity of NGO projects are steadily improving: "A total of 24 projects were funded in this area through the agency in 2024. In 2025, that number has reached 51-a record figure. In 2023-2025, NGOs have organized nearly 50 conferences, presentations, meetings, exhibitions, and public hearings, published 25 books, produced 11 documentaries, and created 21 video clips under these projects."

The director emphasized that, as in recent years, the Return to Western Azerbaijan process will remain a priority in the 2026 grant competitions: "Currently, submitted projects are undergoing expert evaluation. Priority will be given to initiatives such as organizing conferences abroad on Western Azerbaijan, hosting side events at international and regional organizations, and preparing and disseminating joint reports with foreign NGOs."

Այսպես կոչված «արևմտյան Ադրբեջանի» թեման Ադրբեջանի պետական դրամաշնորհների առաջնահերթություն 2025-2026թթ. ©report.az

Մյուս կողմից, Ծառայության դիտարկումները ցույց են տալիս, որ շարունակվում է Ադրբեջանի ռազմական ծախսերի աճը: Այս հարցը ռիսկային գնահատելու հիմքում ընկած է ոչ միայն զուտ ռազմական ծախսերի աճը, այլև այն, որ ռազմական հատկացումների աճի տեմպերը զգալիորեն գերազանցում են այլ ոլորտային հատկացումների տեմպերը և շատ դեպքերում՝ իրականացվում առերևույթ այլ ոլորտների հաշվին:

Գրաֆիկ 2. ԱՀ բյուջեի ռազմական և «ոչ ռազմական» ծախսերի աճի տեմպերը



Ադրբեջանի բյուջեում ռազմական և այլ ոլորտների 2024-2026թթ. հատկացումները համեմատվել են 2023 թվականի նույն հատկացումների հետ: Արդյունքում 2026 թվականի ռազմական հատկացումներն աճել են շուրջ 44%-ով, իսկ մյուս ոլորտային հատկացումները՝ ընդամենը 7.4%-ով: 2026 թվականի դեպքում անգամ ոչ ռազմական ոլորտների հատկացումների որոշակի նվազում կա՝ 2025 թվականի հետ համեմատ, մինչդեռ ռազմական ոլորտի հատկացումները 2026 թվականի համար շարունակել են աճել:

Գրաֆիկ 3. ԱՀ ռազմական բյուջե



Ադրբեջանի բյուջեում ռազմական ծախսերի աճի պատկերը:

Ռուսաստան-Ուկրաինա. Ռազմադաշտում ուժերի հարաբերակցության, հակամարտող կողմերի քաղաքական նպատակների, գլոբալ դերակատարների շահերի համալիր վերլուծության հիման վրա Ծառայությունը գնահատում է, որ 2026 թվականին Ռուսաստանի և Ուկրաինայի միջև ընթացող հակամարտության կայուն և երկարաժամկետ հանգուցալուծումը քիչ հավանական է: Չնայած բանակցային գործընթացի ընթացիկ ինտենսիվությանը՝ մեծ հավանականությամբ 2026 թվականի ընթացքում կողմերը կշարունակեն ունենալ իրար բացառող նպատակներ, տրամագծորեն հակառակ դիրքորոշումներ յուրաքանչյուրի համար որպես կենսական ներկայացվող մի շարք հարցերի շուրջ, ինչն էլ իր հերթին կպահպանի համակարտության ռազմական դրսևորման հիմքերը:

Հավանական է, որ 2026 թվականի ընթացքում Ուկրաինան կպահպանի ռազմական առումով Ռուսաստանի գործողություններին դիմադրելու կարողությունը: Միաժամանակ պատերազմական գործողությունները հաջողությամբ շարունակելու պոտենցիալի առումով միջնաժամկետ հեռանկարում Ռուսաստանն ունի նկատելի առավելություն:

Ուկրաինայի համար մեկ այլ կարևոր մարտահրավեր է ներքին կայունության ապահովումը: Հյուծիչ պատերազմի, օբյեկտիվորեն կուտակված ներքաղաքական հակասությունների և ակտիվ աշխարհաքաղաքական ճնշումների պայմաններում ընտրությունների մասին խոսույթն ինքնին անկանխատեսելի հետևանքների մեծ ռիսկ է պարունակում:

Այդուհանդերձ, ամենայն հավանականությամբ, Ռուսաստանի դեմ սահմանված պատժամիջոցների առնվազն էական մասը կպահպանվի, ինչը կշարունակի ռիսկեր ստեղծել Հայաստանի տնտեսության համար, այդ թվում՝ երկրորդային տնտեսական պատժամիջոցների տեսանկյունից: Միաժամանակ, որոշ աշխարհաքաղաքական կենտրոնների միջև շարունակական բևեռացումը, մեծ հավանականությամբ, կխորացնի Հայաստանի արտաքին քաղաքական և տնտեսական հարաբերությունները հավասարակշռելու տեսանկյունից առկա ռիսկերը:



«Վիշապի ատամներ» հակատանկային ուղեփակոցներ Ուկրաինայի Խարկովի շրջանում, 2025թ. մարտ. Լուսանկարը՝ Diego Fedele/Getty Images



Իրանական «Ֆաթահ» գերձայնային բալիստիկ հրթիռի ցուցադրություն Թեհրանում, 2023թ. Լուսանկարը՝ Hossein Zohrevand/Tasnim News Agency՝ AP-ի միջոցով

Իսրայել-Իրան. Իսրայել-Իրան պատերազմը նշանակալի ազդեցություն է ունեցել Մերձավոր Արևելքի և Պարսից ծոցի տարածաշրջանի դերակատարների քաղաքականության վրա՝ տարածաշրջանում ձևավորելով ուժային նոր հարաբերակցություն: Մերձավոր Արևելքում առկա ոչ պետական ռազմականացված խմբավորումների կարգավիճակի որոշումը, դրանց հետագա գործունեության հետ կապված անորոշություններն ու այդ հարցում տարածաշրջանային և արտատարածաշրջանային դերակատարների հակասական դիրքորոշումներն էլ ավելի են բարդացնում իրադրությունը:

Իսրայել-Իրան պատերազմի հետևանքով Իրանի միջուկային և հրթիռային ծրագրերը հետ մղվեցին, սակայն չչեզոքացվեցին: Հետպատերազմական շրջափուլում գործնականում փոխվել են նաև Իրանի հետ բանակցային օրակարգի հարցերը, որոնք, բացի միջուկային ծրագրից, վերաբերում են Իրանի հրթիռային կարողություններին, ինչպես նաև Իրանի մերձավորարևելյան քաղաքականությանը: Հետպատերազմյան փուլում երկու երկրները զբաղված են պատերազմի ընթացքում ի հայտ եկած խոցելիությունները վերացնելով և ռազմական կարողությունները զարգացնելով:

Մյուս կողմից, 12-օրյա պատերազմից հետո էլ ԱՄՆ-Իրան միջուկային հարցով բանակցությունների թեման կշարունակի մնալ ավելի լայն համատեքստում տեղի ունեցող գործընթացների վրա ազդող գործոն:

Նկատի ունենալով այն փաստը, որ Իսրայել-Իրան 12-օրյա պատերազմը չապահովեց կողմերի ռազմավարական բոլոր նպատակների իրագործումը՝ 2026 թվականին, մեծ հավանականությամբ, կպահպանվի պատերազմի կամ այլ ինտենսիվության փոխադարձ հարվածների կրկնվելու հավանականությունը: Սա իր հերթին կընդլայնի Հայաստանի Հանրապետության անվտանգության խնդիրների շրջանակը՝ միգրացիոն ու այլ տեսակի վտանգի աղբյուր հանդիսացող խմբերի շարժերի կառավարման, տնտեսական, լոգիստիկ խնդիրների առաջացման, ինչպես նաև Հարավային Կովկասում խաղաղության ամրապնդման գործընթացը վտանգող ռիսկերի բազմազանեցման առումով:

Սրա հետ մեկտեղ, Իրանում ընթացիկ ներքին գործընթացների կառավարման հարցում իսլամական համակարգի հաջողությունը, ամենայն հավանականությամբ, էական նշանակություն կունենա Մերձավոր Արևելքի և արտատարածաշրջանային դերակատարների կողմից առաջ մղվող օրակարգերի նյութականացման հարցում: Իրանում անկայունությունների աճն էլ ավելի կընդլայնի Հայաստանի անվտանգային ռիսկերը:

Իսրայելի ՌՕՈւ Ֆ-35 կործանիչ. Լուսանկարը՝ AP Photo/Ariel Schalit

Մերձավոր Արևելք. Չնայած տևական հրադադարի համար ստեղծված նախապայմաններին՝ Գազայի հատվածում ռազմական գործողությունների վերսկսման ռիսկը հավանաբար կպահպանվի, եթե տևական ժամանակ ՀԱՄԱՍ-ը քայլեր չձեռնարկի զինաթափման ուղղությամբ, իսկ Իսրայելը շարունակի մերժել հրադադարը երաշխավորող դերակատարների կողմից առաջարկված լուծումները՝ ի թիվս այլնի, պայմանավորված նաև 2026 թվականին Իսրայելի ներքաղաքական զարգացումներով:

2026 թվականին Իսրայել–Լիբանան և Իսրայել–Սիրիա երկկողմ հարաբերություններում, ամենայն հավանականությամբ, կպահպանվի լարվածությունը: Երկու երկրների հետ լարվածության հնարավոր նվազումն ու հարաբերությունների կարգավորումն Իսրայելը կշարունակի պայմանավորել Սիրիայում և Լիբանանում տեղի ունեցող ներքին զարգացումներով՝ ամրապնդելով կոնֆլիկտները Իսրայելի սահմաններից դուրս պահելու և լուծում պարտադրելու սեփական ռազմավարությունը, և դա պատճառաբանելով սեփական անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ:

Սիրիայում անկայուն իրավիճակը հավանական է, որ կշարունակվի: Երկրի ամբողջ տարածքում վերահսկողություն հաստատելը, արտաքին ուժերի ներկայացվածության սահմանափակումը, տնտեսական կյանքի վերակենդանացումը, ինչպես նաև հարևան երկրների հետ պրագմատիկ հարաբերություններ հաստատելու փորձերը կլինեն Սիրիայի ժամանակավոր կառավարության գլխավոր մարտահրավերները: Դրանց հասցեագրման հաջողությունը կախված կլինի ոչ միայն Սիրիայի էթնիկ/կրոնական տարբեր խմբերի կողմից երկրի միասնականությանն աջակցելու մտադրությունից ու հնարավորությունից, այլ նաև ռեգիոնում սեփական անվտանգության ընկալումները Սիրիայում տեղի ունեցող զարգացումների հետ կապող այլ պետական դերակատարների մոտեցումներից:

Հավանականությունը քիչ է, որ Լիբանանում ռազմական կարողությունների կառավարման հարցում մենաշնորհի ապահովմանն ուղղված երկրի իշխանությունների ջանքերը 2026 թվականին ունենան մեծ արդյունավետություն, ինչն էլ, իր հերթին կմեծացնի Լիբանանում իսրայելական ակտիվ գործողությունների շարունակման հավանականությունը:

Մերձավոր Արևելքի խաղաղության գագաթնաժողով Շարմ Էլ Շեյխում, 2025թ. ©primeminister.am

ՀԱՊԿ. Հայաստան-ՀԱՊԿ հարաբերությունների մասով Ծառայության 2026 թվականի գնահատականը չի տարբերվում անցյալ տարվա գնահատականից: Մասնավորապես, Հայաստանի կողմից ՀԱՊԿ անդամության «ապասառեցում», ամենայն հավանականությամբ, տեղի չի ունենա, ինչը շարունակում ենք գնահատել որպես տարածաշրջանային անվտանգային կառույցի հեղինակության մարտահրավեր և հետևությունների աղբյուր կառույցի մյուս անդամ պետությունների համար:

ՄԱՍ 4

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱՍ 4. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի և Թուրքիայի ներկայացուցիչների հանդիպումը Ախուրիկում, 2025թ. ©mfa.am

2025 թվականին շարունակվել է գլոբալ և տարածաշրջանային երկրների մրցավազքը տնտեսական և ենթակառուցվածքային ծրագրերի շուրջ: Տարածաշրջանի երկրների համար պայմաններ են ստեղծվել լարվածության որոշակի թուլացման, տարածաշրջանային կայունության հեռանկարների իրացման առումով: Նման ծրագրերի համար գլոբալ և տարածաշրջանային մրցակցության դինամիկան, ամենայն հավանականությամբ, կպահպանվի 2026 թվականին:

Տարածաշրջանային ենթակառուցվածքային և տնտեսական ծրագրերը թեև խաղաղության ինստիտուցիոնալացման միակ շարժիչ ուժը չեն, այդուհանդերձ, դրանք ունեն մեծ ներուժ մի կողմից բարձրացնելու տարածաշրջանում ռազմական էսկալացիայի գինը, մյուս կողմից, տարածաշրջանի պետություններին առաջարկելու սեփական քաղաքական ու տնտեսական գործոնի ուժեղացում՝ այդ ծրագրերում ներգրավման միջոցով:

Մեր տարածաշրջանի ամբողջական ապաշրջափակումը և մասնավորապես՝ Կարս-Գյումրի երկաթուղու հնարավոր վերաբացումը, «TRIPP ուղի» ծրագրի իրագործումը, ինչպես նաև մեր հարևանների հետ երկկողմ կապակցվածության հնարավոր նախաձեռնությունները կառաջացնեն տնտեսական ու լոգիստիկ լայն հնարավորություններ՝ շուկաների դիվերսիֆիկացում, տարածաշրջանային առևտրի ընդլայնում:

Այն կարող է համաչափ զարգացման հնարավորություններ ստեղծել արևմուտքում՝ Հայաստան-Թուրքիա և արևելքում՝ Հայաստան-Ադրբեջան սահմանամերձ շրջանների բնակչության համար՝ սահմանի երկու կողմում: Բացի այդ, Թուրքիայի ու Ադրբեջանի հետ կապուղիների վերականգնումը կընձեռնի տարածաշրջանում մարդկանց, բեռների ու ծառայությունների ավելի արագ ու ծախսարդյունավետ շարժ իրականացնելու հնարավորություն, ինչը կմեծացնի տարածաշրջանի մրցունակությունը ու միջազգային գրավչությունը:

Մեր գնահատմամբ, մեծ է հավանականությունը, որ մեր տարածաշրջանում թե՛ տնտեսական, թե՛ ենթակառուցվածքային ծրագրերի դրական դինամիկան կպահպանվի 2026 թվականին:

Միևնույն ժամանակ, ենթակառուցվածքային աշխարհաքաղաքականությունն ի ցույց է դնում, թե ինչպես են պետական դերակատարները տնտեսական լծակներ ու կախվածություն առաջացնելու միջոցով օգտագործում ենթակառուցվածքները՝ ընդլայնելու համար սեփական ազդեցությունը: Կարծում ենք, որ մեր տարածաշրջանի տնտեսական, ենթակառուցվածքային, առևտրային նոր նախաձեռնությունները 2026 թվականին շարունակաբար լինելու են տարածաշրջանում վնասակար շահեր հետապնդող տարբեր դերակատարների թիրախում, որը կարող է արտացոլվել թե՛ ֆիզիկական սահմանափակումներով, թե՛ տեղեկատվական ազդեցության օպերացիաներով, և թե վնասարար այլ գործողությունների դրսևորումներով:

ՄԱՍ 5

ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ



Մեր երկրի այս տարվա արտաքին վտանգների պատկերում օբյեկտիվորեն մեծ բաժին են կազմում կանխատեսվող արտաքին միջամտության և հիբրիդային վտանգների մասին գնահատականները՝ պայմանավորված 2026 թվականը Հայաստանում համապետական ընտրությունների տարի լինելու հանգամանքով: Սակայն մինչև Հայաստանի դեմ ուղղված հիբրիդային սպառնալիքների մասին խոսելը, օգտակար ենք համարում ներկայացնել, թե Ծառայությունն ինչպես է ձևակերպում հիբրիդային սպառնալիքների նյութականացման, այն է՝ հիբրիդային պատերազմի (hybrid warfare) հասկացությունը:

Պետք է նաև նկատի ունենալ, որ այս հասկացության համընդունելի կամ միջազգային կոդիֆիկացված սահմանում առայժմ չկա, ինչը նաև պարարտ հնարավորություն է ստեղծում հիբրիդային պատերազմի գործիքակազմ կիրառող դերակատարների համար՝ թիրախավորելու ինքնին այս երևույթը բնորոշող հասկացությունների ճշմարտացիությունը և կոնկրետությունը:

Ինչ է հիբրիդային պատերազմը

Հիբրիդային պատերազմը մեկ ընդհանուր մտահաղացմամբ տարբեր բնույթի միջոցների (ռազմական, տնտեսական, տեղեկատվական) համադրության՝ բացահայտ ու ծածուկ եղանակով կիրառումն է՝ նպատակ ունենալով վնասել թիրախին՝ ստեղծելով անորոշություններ, տագնապ, պետական ինստիտուտների բնականոն գործունեության պարալիզացում, հանրային կարծիքի ցանկալի ուղղությամբ ուղղորդում, միաժամանակ բարդացնելով պատասխանատվության վերագրման ու պատասխան քայլերի հնարավորությունները, ինչպես նաև հիբրիդային պատերազմի հեղինակի բացահայտումը: Այդ մեթոդները կարող են ընդգրկել օրինակ՝ ոչ ֆորմալ զինված խմբերի կիրառում, կիբեռհարձակումներ, տեղեկատվական վնասարար գործողություններ, տնտեսական ճնշումներ, չհայտարարված տնտեսական պատժամիջոցներ, արտաքին ազդեցության ենթարկվող ներքաղաքական սուբյեկտների քաղաքական ակտիվացում ու հստակ գործողություններում նրանց ներգրավում և այլն: Պետք է նաև նկատի ունենալ, որ կախված կոնկրետ դեպքից և նպատակից՝ հիբրիդային գործիքակազմ կիրառողը կարող է օգտվել նշված միջոցների տարբեր համադրություններից:

Հայաստանի հիբրիդային սպառնալիքները 2026 թվականին

2025 թվականին Հայաստանն առնչվել է հիբրիդային սպառնալիքների նյութականացման տարբեր դրսևորումների, որոնք 2026 թվականի ընտրություններով պայմանավորված, մեծ հավանականությամբ, կդառնան ավելի ընդգրկուն, ավելի բարդ, ավելի մասշտաբային:

Հայաստանի դեմ հիբրիդային գործողությունները հետապնդում են մի շարք նպատակներ, այդ թվում՝ արժեզրկել ու իմաստազրկել խաղաղության հաստատման հնարավորությունը, դրա փաստը, խաղաղության հասնելու ճանապարհի ձեռքբերումները և դրա հետ կապված դրական մթնոլորտը, սերմանել դավադրապաշտական մտքեր, որ իբրև թե առկա են գաղտնի համաձայնություններ՝ ուղղված Հայաստանի շահերի դեմ, շահագործել Ղարաբաղից տեղահանված մեր հայրենակիցների զգայնությունները՝ մեր հասարակությանը մատուցելով կեղծ աշխարհաքաղաքական և իրականությանը չհամապատասխանող երկընտրանքներ:

2026 թվականի ընթացքում, մեծ հավանականությամբ, զգալիորեն կակտիվանան մասնավորապես «TRIPP ուղի» նախագծի վրա ազդեցություն ունենալու հիբրիդային գործողությունները: Ընդ որում, 2025 թվականի երկրորդ կեսին արդեն իսկ ուրվագծվել է, որ ծրագիրը թիրախավորող տարածաշրջանային և արտատարածաշրջանային դերակատարները, մեծ հավանականությամբ, տարբեր նպատակներ հետապնդելով, այդուհանդերձ իրականացնում են որոշակիորեն հատվող գործողություններ:

Հայաստանի դեմ հիբրիդային գործողություններում ներգրավված պետական և ոչ պետական դերակատարների կողմից, մեծ հավանականությամբ, կիրառվելիք գործիքակազմը կներառի՝

Վնասակար կիբեռ-գործողություններ

Դրանք միտված են Հայաստանի կրիտիկական ենթակառուցվածքները կաթվածահար անելուն, դրանց կառավարման կորստին, կենսական ծառայությունների մատուցման չեղարկմանը և այլն: Այս առումով հավանականությունը բարձր է, որ թիրախում կհայտնվեն՝

- ֆինանսաբանկային կազմակերպությունները,
- կապի և հաղորդակցության ենթակառուցվածքները,
- կառավարության (այդ թվում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, տարածքային ու տեղամասային ընտրական հանձնաժողովների) թվային հարթակները, այդ թվում՝ հանրային ծառայությունների մատուցման թվային ենթակառուցվածքները,
- էլեկտրականության բաշխման թվային ենթակառուցվածքը և այլն:

Տեղեկատվական վնասարար գործողություններ

Նախընտրական շրջանում արտաքին դերակատարների կողմից տեղեկատվական վնասարար գործողությունները (կեղծ, խեղաթյուրված, համատեքստից կտրված տեղեկատվություն, վնասարար տեղեկատվական օպերացիաներ) դրսևորվում են մեր հանրությանը կեղծ ու խեղաթյուրված տեղեկություններով թիրախավորելու, մեր տեղեկատվական տիրույթում Հայաստանի շահերին հակասող խոսույթներ ներմուծելու ձևով՝ նպատակ ունենալով ուղղորդել առաջիկա ընտրություններում ընտրողների կամարտահայտումը: Գործի է դրվում ինչպես տեսանելի քարոզչության, այնպես էլ քողարկված տեղեկատվական գործողությունների համադրություն:

Հայաստանի դեմ տեսանելի քարոզչությունը հիմնականում իրականացվում է օտարերկրյա պետական/իշխանական մարմինների, այդ թվում՝ հատուկ ծառայությունների կամ նրանց հետ կապված ռեսուրսների միջոցով: Քողարկված գործողությունները, որոնք հաճախ սնուցում և բազմապատկում են տեսանելի քարոզչությունը, օգտագործում են որևէ օտարերկրյա պետական դերակատարի ակնհայտ հետք չպարունակող կայքէջեր և օգտահաշիվներ՝ առավել կտրուկ, շոկային էֆեկտ առաջացնող թեզեր շրջանառելու նպատակով:

2025 թվականին արձանագրել ենք տարբեր դերակատարների կողմից կեղծ հաշիվների և գովազդների, բոտային ցանցերի միջոցով կեղծ տեղեկատվության, ապատեղեկատվության կամ խեղաթյուրված տեղեկատվության տարածման մարտավարություն: Շարունակել են աճել արհեստական բանականությամբ կեղծ տեքստային և տեսաձայնային նյութերի գեներացման հնարավորությունները՝ ձևավորելով ճկուն և արագ զարգացող գործիքների օգտագործմամբ մեծ ծավալով ապատեղեկատվության տարածման կայուն միտում, որը մեծ հավանականությամբ ավելի մասսայական կդառնա 2026 թվականին:



Մեր գնահատմամբ՝ 2026 թվականին կպահպանվի օտարերկրյա տեղեկատվական հարթակներում կեղծ տեղեկություններ տեղադրելու, ապա դրանք տարածաշրջանային դերակատարների պաշտոնական և ոչ պաշտոնական ռեսուրսներով «լեգիտիմացնելու» և տարածելու միտումը, որի դրսևորումն արձանագրել ենք 2025 թվականին:

Մեկ այլ կրկնվող մեթոդ, հավանաբար, կմնա նոր հարթակների ստեղծումը ապատեղեկատվության հրապարակման և հետագա տարածման համար:

2025 թվականին արձանագրել ենք այդ թվում իրական հեղինակների և կայքէջերի նմանակող նոր ռեսուրսների օգտագործման դեպքեր, որոնք մեծ հավանականությամբ ստեղծվել են բացառապես կեղծ տեղեկություններ տարածելու նպատակով:
Տեղեկատվական վնասարար գործողությունների ամենավտանգավոր միտումը կշարունակի մնալ կեղծ տեղեկությունների առերևույթ աննկատ համադրումն իրական տեղեկությունների հետ, ինչպես նաև դրանց տարածումն ու ամրապնդումը իրական և մեծ լսարան ունեցող առցանց հարթակների և անձանց միջոցով:

2025թ. հուլիսին կիրառված ապատեղեկատվության տարածման սխեմա



Գործակալական ցանցի, ազդեցության գործակալների, գործարարության քողարկմամբ քաղաքականությամբ զբաղվող այլ դերակատարների, հոգևոր-մշակութային կառույցների ու դրանց՝ հանրային ճանաչում ունեցող ներկայացուցիչների ակտիվացում

2025 թվականի ընթացքում արդեն իսկ արձանագրվել է Հայաստանի ներքաղաքական գործընթացներին արտաքին միջամտությունների աճ: Նշված գործիքակազմը ներառում է ինչպես Հայաստանում գործող գործակալական ցանցի ու սատարվող ուժերի ակտիվացում, այնպես էլ՝ Հայաստանի ներքաղաքական կյանքում արտաքին ուժերի հետ կապված նոր քաղաքական ուժերի կուլտիվացման գործողություններ (քաղաքական ինժեներիա):

Ներքին անկայունացման հիբրիդային գործողություններից են իբրև թե «տեղական» քաղաքական ակտիվության կուլտիվացիան, տարբեր եղանակներով դրա ֆինանսավորումը, ինչպես նաև տեղեկատվական աջակցությունն ու կազմակերպումը:

Իրականացվում են երիտասարդության և ակտիվիստական խմբերին թիրախավորող, վերջիններիս քաղաքական հայացքները, հայրենասիրական զգացմունքները շահագործող և մանիպուլացնող գործողություններ՝ հաջորդիվ նրանց արտաքին դերակատարների նպատակներին ծառայեցնելու նպատակով:

Հանրային դիվանագիտության, կրթական, սպորտային ու ճանաչողական միջոցառումների քողի տակ կազմակերպվում են գաղափարական պատրաստման և հավաքագրման գործողություններ, որոնց հետևանքով թիրախավորված խմբերը, հաճախ անգիտակցաբար, մաս են դառնում արտաքին միջամտության առավել լայն սխեմայի:

Արտաքին ուժերի կողմից նախընտրական շրջանում կուլտիվացվող ու օգտագործվող դերակատարների մասով առանձնահատուկ տեղ ունեն այլ պետության կառավարող շրջանակների հետ ուղղակի կամ անուղղակի կապված գործարարները, հոգևոր-մշակութային գործիչներն ու կազմակերպված հանցավոր տարրերը: Այս դերակատարները կարող են ներգրավվել նախընտրական ու հետընտրական շրջաններում, ինչպես նաև բուն քվեարկության օրը հանրային անհնազանդության ակցիաների քողի ներքո սաբոտաժի գործողություններ կազմակերպելու համար:

Նման գործողությունների նպատակը Հայաստանի դիմադրողականության խարխլումն է, ժողովրդավարական կարգի ջլատումը՝ ազատ, արդար ու թափանցիկ ընտրությունների ապալեգիտիմացումը կամ լեգիտիմության էական ստվերումը, հաջողվելու դեպքում նաև՝ արտաքին դերակատարների կողմից Հայաստանի շահերին դեմ գնացող ազդեցության համար ընկալունակ և «հարմար» իշխանության ձևավորումը:

Տնտեսական, էներգետիկ ճնշումներ

Նկատի ունենալով Հայաստանի Հանրապետություն ապրանքների ներմուծման ու արտահանման կառուցվածքն ու հիմնական ուղղությունները, 2025 թվականին նկատելի են եղել տարբեր դերակատարների կողմից հիմնական արտահանման ապրանքների մասով առերևույթ օբյեկտիվ, սակայն իրականում հատուկ հրահրվող ու կազմակերպվող խոչընդոտները (ներառյալ ոչ պետական դերակատարների ներգրավմամբ), որոնք դրսևորվել են ապրանքների խմբաքանակների առգրավումներից մինչև դրանք արտահանող ֆիզիկական անձանց դեմ քրեական գործերի հարուցումներով, արտահանմանը ներգրավված տեխնիկական անձնակազմի զանգվածային ձերբակալություններով, արտաքսումներով, ինչպես նաև այլ խոչընդոտներով:

Այս գործողությունների նպատակը գործարարությամբ զբաղվող ընտրողների շրջանում կառավարության քաղաքականությունից դժգոհություն գեներացնելը և հետևաբար նրանց ընտրությունն ուղղորդելն է: 2025 թվականին արձանագրված այս միտումը, մեծ հավանականությամբ, կպահպանվի 2026 թվականին:

Էներգետիկ ճնշումները թեև քիչ հավանական, սակայն հիբրիդային գործողությունների արդյունավետ միջոց կարող են լինել, եթե Հայաստանի դեմ ճնշումը բարձրացնելու որոշում կայացվի:

Միգրացիոն կանոնների փոփոխությունները, դրանց ընտրողաբար կիրառումը հավանական է, որ Հայաստանի քաղաքացի միգրանտների նկատմամբ հիբրիդային գործիքակազմի մաս կկազմի: Սա նույնպես կառավարությունից դժգոհության գեներացման ու ընտրողների քվեարկության վրա ազդելու նպատակ է հետապնդում:

Այլ ճնշումներ

Որպես ազդեցության գործողությունների մեկ այլ դրսևորում՝ 2026 թվականին կարող են շարունակվել Հայաստանի Հանրապետության կառավարության ու օրենսդիր մարմնի բարձրաստիճան պաշտոնյաների ու նրանց ընտանիքի անդամների թիրախավորումը, նրանց դեմ զրպարտչական նոր արշավների ձեռնարկումը: Միաժամանակ կարող է իրականացվել թիրախավորող կողմի համար ցանկալի քաղաքական և այլ գործիչների կերպարի խթանում, առաջ մղում:

Այն փաստը, որ 2026 թվականին Հայաստանը հյուրընկալելու է հեղինակավոր ու մեծամասշտաբ մի շարք միջոցառումներ, հավանական է դարձնում, որ հիբրիդային գործիքակազմ կիրառող դերակատարները կփորձեն օգտագործել նշված միջոցառումները՝ տարբեր վնասակար գործողություններով Հայաստանի՝ որպես մասշտաբային միջոցառումների կազմակերպչի միջազգային հեղինակությանը վնասելու համար:

ՄԱՍ 6

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ 6. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

2025 թվականին միջազգային ահաբեկչական հարձակումների թիվը շարունակել է մնալ բարձր՝ ընդգրկելով ավելի լայն աշխարհագրություն: Արձանագրվում է միջազգային ահաբեկչության՝ Մերձավոր Արևելքից դեպի Աֆրիկայի Սահելի շրջան տարածման միտում: 2026 թվականին ջիհադիստական խմբերը, հավանաբար, կշարունակեն օգտագործել Սահելում Ֆրանսիայի, ԱՄՆ-ի և ՄԱԿ ուժերի դուրս գալուց հետո առաջացած «բացը» և ընդլայնել իրենց ազդեցությունը:

Իսլամական պետության (ԻՊ) հիմնական ակտիվության կենտրոնները շարունակում են մնալ Սիրիան և Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը: Միաժամանակ, ԻՊ-ը ընդլայնում է իր ազդեցությունը, և արդեն գործում է առնվազն 22 երկրում:

2026 թվականին Սիրիայում, ամենայն հավանականությամբ, կշարունակվի ԻՊ ակտիվությունը, հատկապես այն բանից հետո, երբ Սիրիան միացավ ԻՊ դեմ պայքարի կոալիցիային: Միաժամանակ, Սիրիայում գործող այլ զինված/ահաբեկչական խմբավորումները, մեծ հավանականությամբ, կպահպանեն հարձակումներ իրականացնելու կարողությունները, ինչն իր հերթին, կարող է պայմաններ ստեղծել, որ Սիրիայի նոր իշխանություններից դժգոհ որոշ խմբեր վերադառնան հարձակումների գործելաոճին:

Ահաբեկչական խմբավորումները գնալով ավելի շատ են օգտագործում նորագույն տեխնոլոգիաներ, այդ թվում՝ առավել պաշտպանված հաղորդակցություն, կրիպտոարժույթներ, ինչը մեծ հավանականությամբ կարող է մեծացնել հարձակումների կանխարգելման ու տեղեկատվության հասանելիության բարդության աստիճանը:

2026 թվականին միջազգային ահաբեկչությունը կշարունակի մնալ անընդհատ զարգացող և վերափոխվող համաշխարհային սպառնալիք, ուստի, հետախուզական կառույցների միջև շարունակական համագործակցությունը կշարունակի լինել միջազգային ահաբեկչության դեմ պայքարի կարևոր բաղադրիչ:

Ինչ վերաբերում է միջազգային կազմակերպված հանցավորությանը, մեծ թվով երկրների քաղաքացիների համար առանց վիզայի մուտքի ռեժիմը մեզ համար կշարունակի ստեղծել ռիսկեր՝ ահաբեկչական խմբավորումների անդամների կողմից Հայաստանը որպես տրանզիտային երկիր օգտագործելու իմաստով: Մեկ այլ վտանգ է մաքսանենգ ճանապարհով թմրանյութերի տեղափոխումը դեպի Հայաստան, ապա մեր տարածքով՝ դեպի այլ երկրներ:

Հայաստանը, որպես միջազգային իրավունքի պատասխանատու դերակատար, հանձնառու է շարունակել բարելավել միջազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի իր կարողությունները և ընդլայնել համագործակցությունը միջազգային գործընկերների հետ:

ՄԱՍ 7

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՒ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ

ՄԱՍ 7. ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՒ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ

2026 թվականին, ամենայն հավանականությամբ, ռազմավարական առավելություն ապահովող տեխնոլոգիաների և դրանք հնարավոր դարձնող հանածոների համար մրցակցությունն առավել ընդգծված կդառնա: Ռազմավարական նշանակության այնպիսի տեխնոլոգիաների արտադրությունը, ինչպիսիք են կիսահաղորդիչները և չիպերը, քվանտային տեխնոլոգիաները, արբանյակային (այդ թվում՝ իրերի ինտերնետի) համակարգերը, մաքուր էներգիայի տեխնոլոգիաները, բիոտեխնոլոգիաները, արհեստական բանականությամբ (ԱԲ) աշխատող զինատեսակները, վերածվում է ազգային հզորության ցուցիչի, իսկ այն պետությունները, որոնք ունեն նաև կրիտիկական հանածոների, հազվագյուտ հողային տարրերի զգալի պաշարներ, ձեռք են բերում աշխարհաքաղաքական նոր լծակներ: Մյուս կողմից, ինքնաբավ մատակարարման շղթաների, ավտոնոմ արտադրական գործընթացների կազմակերպման ձգտումները, մեծ հավանականությամբ, կբարձրացնեն արտադրական ծախսերը, կդանդաղեցնեն տեխնոլոգիական մշակումների տեմպը՝ որոշ դեպքերում հանգեցնելով ռեսուրսային նացիոնալիզմի:

Սպառազինության և ռազմական տեխնիկայի արտադրական տեմպերը ևս, մեծ հավանականությամբ, կշարունակեն աճել 2026 թվականին: Ակտիվ հակամարտություններն էլ ավելի կմեծացնեն սպառազինության պահանջարկը, իսկ ռազմադաշտում նոր զինատեսակները փորձարկելու լայն հնարավորությունները կարագացնեն «արտադրանք-փորձարկում-կիրառում» շղթան՝ սպառազինության մրցակցային շուկան դարձնելով էլ ավելի տեխնոլոգիահենք ու էլ ավելի մրցակցային՝ ներառյալ ռազմարդյունաբերական ընկերությունների կողմից դեպի ոչ ռազմական նշանակության տեխնոլոգիաների մշակման ոլորտների ընդլայնման միջոցով:

2025 թվականին տեխնոլոգիաները շարունակել են թելադրել ռազմական գործողությունների վարման տեմպը՝ կերպափոխելով ավանդական պատերազմավարման ձևերը: Անհամաչափ առավելություն տվող տեխնոլոգիաներն ընդլայնել են «անհպում» պատերազմի հնարավորությունները: 2026 թվականին անօդաչու համակարգերի տեխնոլոգիական զարգացվածությունը հնարավորություն կտա դրանք ներգրավել ավելի բարդ օպերացիաներում, այդ թվում՝ օպերատորի տեսանելիության գծից դուրս: Մեծ հավանականությամբ, կընդլայնվի դրոնների դեմ պայքարում դրոնների դերը, նոր հեռանկարներ կստեղծվեն անօդաչու-օդաչու ավիացիայի ինտեգրման համար: Ավանդական խոցման միջոցների և ավիացիայի դերը հակառակորդի նկատմամբ ընդգծված առավելության հասնելու մտահղացման իրագործման առումով, շարունակելու է մնալ որոշիչ: ԱԲ-ը, մեծ հավանականությամբ, կշարունակի սահմանափակել մարդու դերը ռազմադաշտում. չփոխարինել, սակայն վերափոխել հրամանատարի գործառույթները որոշումների կայացման գործընթացում՝ զարգացնելով մարդ-մեքենա իրական ժամանակում հաղորդակցման հնարավորությունները: